Արձանագրություն հ.1

ԵՊՀ ՏԿՖ գիտխորհրդի 22.01.15 թ. կայացած նիստի

Ներկա էին խորհրդի 29 անդամներից 28-ը:

Օրակարգում՝

Հեռակա ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում
Պրոֆեսորի պաշտոնի տեղակալման մրցույթ:
Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները: Նրանք ներկայացրեցին իրենց ամբիոնների նոր ընդունված հեռակա ասպիրանտների թեմաները և գիտական ղեկավարներին:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները, որոշակի ճշգրտումներ անելով:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Հ.Մնացականյանը: Նա ներկայացրեց մրցույթի մասնակցների գործերը:

Արտահայտվեցին՝

Գ.Ղարիբյան.- բոլոր թեկնածուներն էլ արժանի են հավակնող պաշտոնին և կոչմանը: Առաջարկում եմ երաշխավորել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Ա.Մարկոսյան.- համամիտ եմ և երաշխավորում եմ թույլատրել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Հ.Սարգսյան . – ես նույնպես երաշխավորում եմ նրանց մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Գալստյան Գագիկ /նախագահ/, Զուրաբյան Կարինե և Բունիաթյան Մարինե:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանի հաղորդագրությունը փակ, գաղտնի քվեարկության արդյունքների մասին: Քվեարկությանը մասնակցել են նիստին ներկա 28 անդամներից 28-ը:

Բոստանջյան Վարդան՝ 25 կողմ, 3 անվավեր;

Սարիբեկյան Ամալյա՝ 23 կողմ, 2 դեմ, 3 անվավեր:

Անտոնյան Քրիստինե՝ 25 կողմ, 3 անվավեր:

Որոշեցին Վ.Բոստանջյանին և Ա.Սարիբեկյանին համարել ընտրված պրոֆեսորի պաշտոնում, իսկ Ք. Անտոնյանի երաշխավորել ստանալու ՀՀ ԲՈՀ-ի կողմից շնորհվող դոցենտի գիտական կոչում:

Գիտխորհրդի նախագահ, Հ.Լ.Սարգսյան
տ.գ.դ., պրոֆեսոր

Գիտխորհրդի քարտուղար, Ա.Հ. Համբարձումյան
տ.գ.թ., դոցենտ